

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Լիտվայի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),
նպատակ ունենալով փոխադարձ շահավետ պայմանների հիման վրա ամրապնդել տնտեսական համագործակցությունը միմյանց միջեւ,
մտադրվելով ստեղծել բարենպաստ պայմաններ մի Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների համար մյուս Պայմանավորվող կողմի տարածքում,
ընդունելով, որ ներդրումների խրախուսումն ու պաշտպանությունը կխթանեն մասնավոր գործարար նախաձեռնությունը եւ կբարձրացնեն երկու երկրների բարգավաճումը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար.

1. "Ներդրում" տերմինի տակ հասկացվում են գույքի բոլոր տեսակները, որոնք ներդրվում են մի Պայմանավորվող կողմի ներդրողի կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ պայմանով, որ ներդրումն իրականացվել է մյուս Պայմանավորվող կողմի օրենքներին եւ իրավական ակտերին համապատասխան եւ ներառում է, մասնավորապես, սակայն ոչ բացառապես.

ա. շարժական եւ անշարժ գույքը, ինչպես նաեւ ցանկացած այլ իրավունքը, in rem, ինչպես, օրինակ՝ գրավադրությունը, գրավի իրավունքը, գրավը եւ նմանատիպ այլ իրավունքները,

բ. բաժնետոմսերը, բաժնեմասերը եւ ձեռնարկությունում մասնակցության այլ ձեւերը,

գ. դրամական կամ տնտեսական արժեք ունեցող ցանկացած պարտավորության կատարման պահանջները,

դ. մտավոր սեփականության իրավունքները, մասնավորապես, հեղինակային իրավունքները, արդյունաբերական գույքային իրավունքները (ինչպիսիք են արտոնագրերը, արդյունաբերական նախագծերը եւ մոդելները, առեւտրային նշանները, առեւտրային անունները) եւ սոու հաուն,

ե. բարի համբավը,

զ. օրենսդրությամբ կամ պայմանագրով տրամադրված տնտեսական գործունեությունների իրականացման ցանկացած իրավունքը, ներառյալ բնական պաշարների հետախուզման, արդյունահանման կամ շահագործման կոնցեսիաները:

Գույքի ներդրման ձեւի ցանկացած օտարում չի ազդի դրա դիտարկմանը որպես ներդրման՝ պայմանով, որ այդպիսի օտարումը իրականացված է ընդունող Պայմանավորվող կողմի օրենքներին եւ իրավական ակտերին համապատասխան:

2. "Ներդրող" տերմինը նշանակում է.

ա. ցանկացած ֆիզիկական անձ, որը հանդիսանում է քաղաքացի, այդ Պայմանավորվող կողմի օրենքներին եւ իրավական ակտերին համապատասխան, կամ Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի տարածքում քաղաքացիություն չունեցող մշտական բնակվող անձ,

բ. հիմնադրված կամ ստեղծված ցանկացած իրավաբանական անձ՝ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օրենքներին եւ իրավական ակտերին համապատասխան:

3. "Եկամուտ" տերմինը նշանակում է՝ ներդրումից ստացված բոլոր գումարները, եւ ներառում է, մասնավորապես, սակայն ոչ բացառապես, շահույթը, կապիտալի աճը,

տոկոսադրույքները, շահաբաժինները, ռոյալթիները եւ վճարները:

4. "Տարածք" տերմինը նշանակում է՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պետական (ցամաքային, ջրային եւ օդային) տարածքը եւ ցանկացած այլ տարածք, որի սահմաններում տվյալ Պայմանավորվող կողմի պետությունը իրականացնում է ինքնիշխան իրավունքներ կամ իրավագործություն՝ միջազգային օրենքին համապատասխան:

5. "Օրենքներ եւ իրավական ակտեր" տերմինը նշանակում է՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի դեպքում՝ այդ Պայմանավորվող կողմի տարածքում գործող օրենքներն ու իրավական ակտերը:

ՀՈԴՎԱԾ 2

Ներդրումների խրախուսում

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին խրախուսի ներդրումներ կատարել իր տարածքում եւ ընդունի այդպիսի ներդրումները՝ համաձայն իր օրենքներին եւ իրավական ակտերին:

ՀՈԴՎԱԾ 3

Ազգային եւ առավել բարենպաստ ազգային ռեժիմ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ բոլոր դեպքերում պետք է ապահովի արդար եւ հավասար ռեժիմ, ինչպես նաեւ՝ նրանց ամբողջական անվտանգությունը եւ պաշտպանությունը:

2. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չպետք է կամայական կամ խտրական միջոցներով վնասի մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների կառավարումը, պահպանումը, օգտագործումը, տնօրինումը կամ տիրապետումը:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին տրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նա տրամադրում է իր սեփական կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումներին, որն ավելի բարենպաստ է:

4. Սույն Համաձայնագրի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես մի Պայմանավորվող կողմին պարտավորեցնող մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների վրա տարածել ցանկացած երրորդ պետության ներդրողներին տրամադրված ցանկացած ռեժիմի շահավետություն, առավելություն կամ արտոնություն, որոնք արդյունք են.

ա) ցանկացած առկա կամ ապագա մաքսային միության, ընդհանուր շուկայի, ազատ առևտրի գոտու, տարածաշրջանային տնտեսական համագործակցության այլ ձևերի կամ նմանատիպ միջազգային համաձայնագրերի, որոնք Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը կողմ է կամ կարող է լինել կողմ,

բ) կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ ցանկացած առկա կամ ապագա համաձայնագրերի կամ հարկմանը վերաբերող ցանկացած այլ կարգավորման:

ՀՈԴՎԱԾ 4

Օտարում

1. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չպետք է օտարի, ազգայնացնի կամ դրանց հավասարազոր հետեւանքներ ունեցող միջոցառումներ ձեռնարկի (այսուհետ՝ օտարում) մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ՝ բացառությամբ, երբ.

ա) այդպիսի օտարումը բխում է հասարակական շահերից եւ իրականացվում է օրենքի շրջանակներում,

բ) օտարումը իրականացվում է առանց խտրականության,

գ) վճարվում է նախնական եւ համարժեք փոխհատուցում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետում նշված փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրման շուկայական արժեքին, որը եղել է օտարման պահից

կամ նախատեսվող օտարման մասին հանրորեն հայտնի դառնալու պահից անմիջապես առաջ, որի նկատմամբ օտարման պահից մինչև ամբողջ փոխհատուցման վճարման օրը կներառվի տոկոսադրույք՝ հաշվարկված LIBOR-ի հիման վրա:

3. Այն ներդրողները, որոնց գույքը օտարվել է, առանց խախտելու սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով իրենց տրված իրավունքները, իրավունք կունենան օտարումն իրականացնող Պայմանավորվող կողմի համապատասխան դատական կամ այլ իրավասու եւ անկախ մարմինների կողմից իրենց գործի արագ քննության՝ պարզելու համար, թե որքանով են այդպիսի օտարումը եւ դրա հետ կապված ցանկացած փոխհատուցումը համապատասխանում սույն հոդվածով սահմանված սկզբունքներին եւ օտարումն իրականացնող Պայմանավորվող կողմի օրենքներին եւ իրավական ակտերին:

ՀՈԴՎԱԾ 5 Վնասների փոխհատուցում

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնց ներդրումները վնասներ են կրում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պատերազմի, ազգային արտակարգ իրավիճակների, խռովության, ապստամբության կամ այլ նմանատիպ իրադարձությունների հետեւանքով, վերջին Պայմանավորվող կողմը կտրամադրվի այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը վերջին Պայմանավորվող կողմը տրամադրում է իր սեփական կամ որեւէ երրորդ պետության ներդրողներին, եւ որն ավելի բարենպաստ է:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի պայմաններին՝ մի Պայմանավորվող կողմի ներդրողները, որոնք վնաս են կրում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած իրադարձության հետեւանքով, եւ որը արդյունք է.

ա) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց ներդրումների կամ դրանց մի մասի բռնագրավման, կամ

բ) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց ներդրումների կամ դրանց մի մասի ոչնչացման, որը չի բխել իրավիճակի անհրաժեշտությունից,

պետք է ստանան վերականգնում կամ փոխհատուցում, որոնք ցանկացած դեպքում պետք է լինեն արագ, ճշգրիտ եւ արդյունավետ:

ՀՈԴՎԱԾ 6 Փոխանցումներ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կերաշխավորի դեպի իր տարածք եւ իր տարածքից դեպի դուրս մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների հետ կապված վճարումների ազատ փոխանցումը, մասնավորապես.

ա) նախնական կապիտալը եւ ներդրումների պահպանման կամ ընդլայնման համար անհրաժեշտ լրացուցիչ գումարները,

բ) եկամուտները,

գ) ներդրումների ամբողջական կամ մասնակի լուծարումից ստացված միջոցները,

դ) ուղղակիորեն ներդրումների հետ կապված փոխառությունների հետ վճարման գումարները,

ե) 4-րդ եւ 5-րդ հոդվածներով նախատեսված փոխհատուցումը,

զ) 7-րդ հոդվածում նախատեսված երաշխավորման կամ ապահովագրման պայմանագրով վճարումները,

է) իր տարածքում ներդրումների առնչությամբ ներգրավված արտասահմանյան աշխատուժի աշխատավարձերի գումարները:

2. Չխախտելով Եվրոպայի միության կողմից ընդունված միջոցառումները՝ փոխանցումները պետք է կատարվեն այն արժույթով, որով իրականացվել է սկզբնական ներդրումը, կամ ազատ փոխարկելի արժույթով՝ ներդրողի համաձայնությամբ, փոխանցման իրականացման օրվա՝ արտարժույթի փոխանակման շուկայական հիմնական

փոխարժեքով, եւ իրականացվեն առանց անհիմն ուշացման:

3. Պայմանավորվող կողմերը սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված փոխանցումներին կտրամադրեն այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը տրամադրվում է որեւէ երրորդ պետության ներդրողների ներդրումների հետ կապված փոխանցումներին:

4. Չնայած սույն հոդվածով սահմանված դրույթներին՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է իրականացնել հավասար, ոչ խտրական եւ բարեխիղճ միջոցառումներ՝ կապված հարկման, վարկատուների իրավունքների պաշտպանության հետ կամ այլ օրենքներին եւ իրավական ակտերին համապատասխանության ապահովման հետ:

ՀՈԴՎԱԾ 7 Սուբրոգացիա

Եթե մի Պայմանավորվող կողմը կամ նրա կողմից նշանակված մարմինը (առաջին Պայմանավորվող կողմ) վճարում է կատարում մյուս Պայմանավորվող կողմի (երկրորդ Պայմանավորվող կողմ) տարածքում ներդրողի ներդրումների համար երաշխավորագրի կամ ապահովագրական պայմանագրի հիման վրա, ապա երկրորդ Պայմանավորվող կողմը ճանաչում է.

ա) առաջին Պայմանավորվող կողմին փոխհատուցվող կողմի բոլոր իրավունքների եւ պահանջների փոխանցումը՝ օրենքով կամ իրավական կարգավորմամբ, եւ

բ) որ առաջին Պայմանավորվող կողմը սուբրոգացիայի իրավունքով ստանում է նման իրավունքները իրականացնելու եւ նրա պահանջները ներկայացնելու իրավունք այն չափով, որն ուներ փոխհատուցվողը:

ՀՈԴՎԱԾ 8 Ներդրումային վեճերի կարգավորումը

1. Մի Պայմանավորվող կողմի եւ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջեւ ծագած վեճերը՝ կապված առաջինի տարածքում վերջինիս ներդրման հետ, հնարավորության սահմաններում պետք է լուծվեն բարեկամաբար: Վեճի առկայության դեպքում ներդրողը պետք է պատշաճ մանրամասնությամբ գրավոր ծանուցի այն Պայմանավորվող կողմին, որի տարածքում կատարվել է ներդրումը:

2. Եթե 1-ին կետում սահմանված գրավոր ծանուցման ներկայացման օրվանից հետո՝ վեճ ամսվա ընթացքում, անհնար է եղել բարեկամաբար կարգավորել վեճը, եւ սպառվել են բոլոր տեղական դատական եւ վարչական միջոցները, Պայմանավորվող կողմը կամ ներդրողը իրավունք կունենա վեճը ներկայացնելու.

* Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (ՆՎԿՄԿ), որը հիմնվել է Պետությունների եւ այլ պետությունների քաղաքացիների միջեւ ներդրումային վեճերի կարգավորման կոնվենցիայի հիման վրա՝ ՆՎԿՄԿ-ի միջնորդ դատավարության ընթացակարգերի կանոնների ներքո հաշտեցման կամ միջնորդ դատավարության համար, եթե երկու Պայմանավորվող կողմերն էլ միացել են կոնվենցիային, կամ

* "ad-hoc" միջնորդ դատարան՝ հիմնված Միավորված ազգերի կազմակերպության միջազգային առետրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) արբիտրաժային կանոնների համաձայն: Վեճին մասնակից կողմերը կարող են գրավոր համաձայնել այդ կանոնները փոփոխել:

3. Միջնորդ դատավարության որոշումը վերջնական եւ պարտադիր կլինի վեճին մասնակից կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է առանց ուշացման իրականացնի ցանկացած այդպիսի որոշումը, որը ճանաչվել է համապատասխան Պայմանավորվող կողմի օրենքներին եւ իրավական ակտերին համաձայն, եւ պետք է ապահովի այդպիսի որոշումների արդյունավետ կիրառումը իր տարածքում:

4. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը, ի պաշտպանություն իրեն, չի հայտարարի, որ հայտարարվող ամբողջ վնասի կամ դրա մի մասի համար փոխհատուցում է վճարվել կամ պետք է վճարվի՝ երաշխավորման կամ ապահովագրման պայմանագրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 9

Պայմանավորվող կողմերի միջև վեճերի կարգավորումը

1. Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ հնարավորության սահմաններում կկարգավորվի դիվանագիտական ուղիներով:

2. Եթե Պայմանավորվող կողմերը համաձայնության չեն գալիս վեճի ծագման օրվանից սկսած՝ վեց ամսվա ընթացքում, ապա, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի պահանջով, այն կարող է ներկայացվել միջնորդ դատարան:

3. Յուրաքանչյուր դեպքի համար միջնորդ դատարանը կկազմավորվի հետևյալ կերպով. Միջնորդ դատավարության պահանջի ներկայացումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նշանակի միջնորդ դատարանի մեկական անդամի: Այս երկու անդամները ընդհանուր համաձայնությամբ հետագա երկու ամսվա ընթացքում ընտրում են երրորդ անդամին, որը հանդիսանում է երրորդ երկրի քաղաքացի: Միջնորդ դատարանի երրորդ անդամը, երկու Պայմանավորվող կողմերի հաստատմամբ, կնշանակվի միջնորդ դատարանի նախագահ:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված ժամանակահատվածներում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվել, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ցանկացած այլ համաձայնության բացակայության դեպքում, անհրաժեշտ նշանակումները կատարելու համար կարող է հրավիրել Միջազգային դատարանի Նախագահին: Եթե Նախագահը որեւէ Պայմանավորվող կողմի պետության քաղաքացի է, կամ եթե որեւէ այլ պատճառով նա չի կարող կատարել նշված գործառույթը, ապա նշանակումները կատարելու համար պետք է հրավիրվի փոխնախագահը: Եթե փոխնախագահը որեւէ Պայմանավորվող կողմի քաղաքացի է, կամ եթե նա նույնպես որեւէ այլ պատճառով չի կարող կատարել նշանակումները, ապա նշանակումները կատարելու համար հրավիրվում է Միջազգային դատարանի այն անդամը, որը ավագության սկզբունքով հաջորդն է եւ որեւէ Պայմանավորվող կողմի պետության քաղաքացի չէ:

5. Միջնորդ դատարանը կսահմանի իր սեփական ընթացակարգը: Միջնորդ դատարանի որոշումները կընդունվեն ձայների մեծամասնությամբ: Կայացված վճիռները կլինեն վերջնական եւ պարտադիր յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար:

6. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կկրի միջնորդ դատարանում իր սեփական անդամի եւ միջնորդ դատավարությունում իր ներկայացուցչության ծախսերը: Նախագահի եւ մյուս ծախսերը Պայմանավորվող կողմերը կկրեն հավասար չափերով: Միջնորդ դատարանը կարող է, այնուամենայնիվ, որոշել, որ ծախսերի մեծ մասը պետք է կրի Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը, եւ այդպիսի որոշումը պարտադիր կլինի երկու Պայմանավորվող կողմերի համար:

ՀՈԴՎԱԾ 10

Առավել բարենպաստ դրույթներ

Եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի ներպետական օրենքը կամ միջազգային օրենքով սահմանված պարտավորությունները, որոնք ներկայումս գործում են կամ կսահմանվեն հետագայում, մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին տրամադրում են առավել բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը տրամադրվում է սույն Համաձայնագրով, ապա նախապատվությունը տրվում է առավել բարենպաստ ռեժիմին:

ՀՈԴՎԱԾ 11

Խորհրդակցություններ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի դիմումով՝ մյուս Պայմանավորվող կողմը արագ կհամաձայնի անցկացնել սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման հետ կապված խորհրդակցություններ:

ՀՈԴՎԱԾ 12
Սույն Համաձայնագրի կիրառումը

1. Սույն Համաձայնագիրը կվերաբերի մի Պայմանավորվող կողմի տարածքում, նրա օրենքներին եւ իրավական ակտերին համապատասխան, մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից կատարված ներդրումներին, որոնք իրականացվել են ինչպես նախքան, այնպես էլ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, բայց չի վերաբերի որեւէ ներդրումային վեճի, որը ծագել է կամ կարող էր ծագած լինել, կամ որեւէ հայցային պահանջի, որը լուծվել է մինչեւ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

2. Սույն Համաձայնագիրը չի վերաբերի այն հարցերին, որոնք կապված են հող ձեռք բերելու, օգտագործման, շահագործման կամ տիրապետման հետ: Այս հարցերը կարգավորվում են յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենքներով եւ իրավական ակտերով:

ՀՈԴՎԱԾ 13
Փոփոխություններ եւ լրացումներ

Պայմանավորվող կողմերը ընդհանուր համաձայնությամբ կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ եւ լրացումներ: Նման փոփոխությունները եւ լրացումները կկատարվեն գրավոր եւ սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո կդառնան նրա անբաժան մասը:

ՀՈԴՎԱԾ 14
Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, տեւողությունը եւ դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա համար Պայմանավորվող կողմերի համապատասխան ներպետական իրավական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա տասը /10/ տարվա ընթացքում: Այն կգործի անորոշ ժամանակահատվածով՝ Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի՝ դադարեցնելու մտադրության մասին մյուս Պայմանավորվող կողմին գրավոր ծանուցելու օրվանից մինչեւ տասներկու /12/ ամիսը լրանալը:

3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչեւ սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամկետը, 1-ից մինչեւ 12-րդ հոդվածների դրույթները կգործեն դադարեցման ժամկետից հետո՝ հաջորդ տասը /10/ տարիների ընթացքում:

Կատարված է Երեւան քաղաքում, 2006թ. ապրիլի 25-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լիտվերեն եւ անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման շուրջ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007 թվականի մարտի 16-ից:

AGREEMENT
BETWEEN THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE
GOVERNMENT OF THE REPUBLIC OF LITHUANIA ON THE PROMOTION AND
RECIPROCAL PROTECTION OF INVESTMENTS

The Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Lithuania, hereinafter referred to as "the Contracting

Parties",

desiring to intensify economic cooperation between them on mutually advantageous conditions,

determined to create favourable conditions for investments by investors of one Contracting Party in the territory of the other Contracting Party,

recognizing that the promotion and protection of such investments will stimulate private business initiative and increase the prosperity of both countries,

have agreed as follows:

Article 1 Definitions

For the purposes of this Agreement,

1. The term "Investment" shall comprise every kind of asset invested by an investor of one Contracting Party in the territory of the other Contracting Party, provided that the investment has been made in accordance with the laws and regulations of the other Contracting Party, and shall include in particular through not exclusively:

(a) movable and immovable property as well as any other rights in rem, such as mortgages, liens and pledges, and similar rights;

(b) shares, bonds and other forms of participation in an enterprise;

(c) claims to money or to any performance having an economic value;

(d) intellectual property rights, in particular copyrights, industrial property rights (such as patents, industrial designs and models, trade marks, trade names) and know-how;

(e) goodwill;

(f) any right to conduct economic activities conferred by law or under contract, including concessions to search for, extract and exploit natural resources.

Any alienation of the form in which assets are invested shall not affect their character as investment, provided such an alternation is made in accordance with the laws and regulations of the host Contracting Party.

2. The term "Investor" shall mean:

a) any natural person, who is considered a citizen in accordance with the laws and regulations of that Contracting Party or stateless person permanently residing in the territory of either Contracting Party;

b) any legal person constituted or organized, in accordance with the laws and regulations of either Contracting Party.

3. The term "returns" shall mean all amounts yielded by an investment and in particular, though not exclusively, includes profits, capital gains, interests, dividends, royalties and fees.

4. The term "territory" shall mean the territory of the State of either Contracting Party (land territory, maritime area and air space), and any other area over which the State of the Contracting Party exercises sovereign rights or jurisdiction in accordance with international law.

5. The term "laws and regulations" shall mean in respect of either Contracting Party the laws and regulations in force in the territory of that Contracting Party.

Article 2 Promotion of Investments

Each Contracting Party shall encourage investors of the other Contracting Party to make investments in its territory and shall admit such investments in accordance with its laws and regulations.

Article 3 National and Most-Favored-Nation Treatment

1. Each Contracting Party shall at all times ensure fair and equitable treatment of the investments made by investors of the other Contracting Party as well as their full security and protection.

2. Neither Contracting Party shall by arbitrary or discriminatory measures impair the management, maintenance, use, enjoyment or disposal of investments made by investors of the other Contracting Party.

3. Each Contracting Party shall accord to the investments made by investors of the other Contracting Party treatment no less favorable than that accorded to the investments made by its own investors or investors of any third State, whichever is more favourable.

4. The provisions of this Agreement shall not be construed so as to oblige one Contracting Party to extend to the investors of the other Contracting Party the benefit of any treatment, preference or privilege accorded to the investors of any third State by virtue of:

a) any existing or future customs union, common market, free trade area, other forms of regional economic cooperation or similar international arrangements to which either Contracting Party is or may become a party.

b) any existing or future agreements relating to avoidance of double taxation or any other arrangement relating to taxation.

Article 4 Expropriation

1. Neither Contracting Party shall expropriate, nationalize or take measures having equivalent effect (hereinafter referred to as

"expropriation") against investments of investors of the other Contracting Party, unless:

a) such expropriation is in the public interest and under due process of law;

b) such expropriation is carried out without discrimination;

c) prior and equivalent compensation is given.

2. The compensation mentioned in point . of the paragraph (1) of this Article shall be equivalent to the market value of the expropriation investment immediately before the expropriation occurred or the impending expropriation became public knowledge, include interest calculated on the LIBOR basis from the date of expropriation until the date of full payment.

3. Investors, whose assets are being expropriated shall, without prejudice to their rights under Article 8 of this Agreement, have a right to prompt review by the appropriate judicial or other competent and independent authorities of the expropriating Contracting Party to determine whether such expropriation, and any related compensation conforms to the principles of this Article and the laws and regulations of the expropriating Contracting Party.

Article 5 Compensation for Losses

1. Investors of one Contracting Party who suffer losses relating to their investments in the territory of the other Contracting Party due to war, a state of national emergency, insurrection, riot or other similar events, shall be accorded by the latter Contracting Party, treatment no less favourable than which it accords to its own investors or to investors of any third State, whichever is more favorable.

2. Notwithstanding in paragraph 1 of this Article, investors of one Contracting Party who suffer losses in the territory of the other Contracting Party in any of the events mentioned in paragraph 1 of this Article, which resulting from:

a) requisition of their investments or part thereof by the latter's forces or authorities, or

b) destruction of their investment or part thereof by the latter's forces or authorities, which was not required by the necessity of the situation,

shall be accorded restitution or compensation which in either case shall be prompt, adequate and effective.

Article 6 Transfers

1. Each Contracting Party shall guarantee to investors of the other Contracting Party free transfer into and out of its territory of payments

related to an investment, in particular:

(a) initial capital and additional amounts for the maintenance or extension of the investment,

(b) returns,

. proceeds from total or partial liquidation of the investment;

(d) funds in repayment of loans directly related to the investment;

(e) compensation provided for in Article 4 and 5;

(f) payments under a guarantee or insurance contract referred to in Article 7;

(g) earnings of personnel engaged from abroad in connection with an investment in its territory.

2. Without prejudice to measures adopted by the European Union, transfers shall be made in currency in which the original investment was made or in any freely convertible currency if agreed upon by the investor, at the applicable market rate of exchange prevailing on the date of transfer, and effected without undue delay.

3. The Contracting Parties shall accord to the transfers referred to in paragraphs 1 and 2 of this Article treatment no less favourable than that accorded to transfers related to investments made by investors of any third State.

4. Notwithstanding the foregoing provisions of this Article, either Contracting Party may maintain equitable, non-discriminatory and good faith application of measures, relating to taxation, protection of rights of creditors, or ensuring compliance with other laws and regulations.

Article 7 Subrogation

If one Contracting Party or its designated agency ("the first Contracting Party") makes a payment under a guarantee or contract of insurance given in respect of an investment in the territory of the other Contracting Party ("the second Contracting Party"), the second Contracting Party shall recognize:

a) the assignment to the first Contracting Party by law or by legal transaction of all the rights and claims of the party indemnified, and
b) that the first Contracting Party is entitled to exercise such rights and enforce such claims by virtue of subrogation to the same extent as the party indemnified.

Article 8 Settlement of Investment Disputes

1. Disputes between a Contracting Party and an investor of the other Contracting Party relating to an investment of the latter in the territory

of the former shall, if possible, be settled amicably. In the event of a dispute the Contracting Party in whose territory the investment was made shall be notified in writing, including detailed information, by the investor.

2. If such a dispute cannot be settled amicably within six months from the date of the written notification provided in paragraph 1, and all domestic judicial and administrative remedies have been exhausted, the Contracting Party or the investor shall be entitled to submit the dispute either to:

* The International Centre for the Settlement of Investment Disputes (I.C.S.I.D) established under the Convention on the Settlement of Investment Disputes between States and Nationals of other States for conciliation or arbitration under ICSID Rules or Procedure for Arbitration Proceedings if both of the Contracting Parties have acceded to the Convention; or

* an ad hoc arbitral tribunal, established in accordance with the Arbitration Rules of the United Nations Commission on International Trade Law (UNCITRAL). The parties to the dispute may agree in writing to modify those Rules.

3. The award of arbitration shall be final and binding on the parties to the dispute. Each Contracting Party shall carry out without delay any such award, recognized in accordance with the laws and regulations of the respective Contracting Party, and shall provide for the effective enforcement of such awards in its territory.

4. Neither Contracting Party shall assert as a defence that indemnification or other compensation for all or part of the alleged damage has been received or will be received pursuant to a guarantee or insurance contract.

Article 9

Settlement of Disputes between the Contracting Parties

1. Any disputes between the Contracting Parties concerning the interpretation or application of this Agreement shall as far as possible be settled through the diplomatic channels.

2. If the Contracting Parties cannot reach an agreement within six months after the beginning of the dispute, the latter shall, upon the request of either Contracting Party, be submitted to an arbitral tribunal.

3. Such an arbitral tribunal shall be constituted for each case in the following way. Within two months from the date on which either Contracting Party receives from the other Contracting Party a request for arbitration, each Contracting Party shall appoint one arbitrator. These two arbitrators shall together, within a further two months period, select a third arbitrator who is a national of a third State. The third arbitrator, once approved by the two Contracting Parties, shall be appointed as Chairman of the arbitral tribunal.

4. If the arbitral tribunal has not been constituted within the periods specified in paragraph 3 of this Article, either Contracting Party may, in absence of any other agreement, invite the President of the International Court of Justice to make any necessary appointments. If the President is a national of State of either Contracting Party, or it otherwise prevented from discharging this function, the Vice-President shall be invited to make the necessary appointments. If the Vice-President is a national of State or either Contracting Party or if also is prevented from discharging the said function, the member of the International Court of Justice next in seniority who is not a national of State of either Contracting Party shall be invited to make the necessary appointments.

5. The arbitral tribunal shall determine its own procedure. The arbitral tribunal shall reach its decisions by a majority of votes. The decisions shall be final and binding upon each Contracting Party.

6. Each Contracting Party shall bear the cost of its own member of the arbitral tribunal and of its representation in the arbitration proceedings; the costs of the Chairman and remaining costs shall be borne in equal parts by the Contracting Parties. The arbitral tribunal may, however, decide that a higher proportion of costs shall be borne by one of the two Contracting Parties and such award shall be binding on both Contracting Parties.

Article 10 More Favourable Provisions

If the domestic law of the State of either Contracting Party or obligations under international law, existing at present or established hereafter, entitle investments by investors of the other Contracting Party to treatment more favourable than that provided by this Agreement such more favourable treatment shall prevail.

Article 11 Consultations

Upon request by either Contracting Party, the other Contracting Party shall agree promptly to hold consultations on the interpretation and application of this Agreement.

Article 12 Applicability of the Agreement

1. This Agreement shall apply to the investments made in the territory of one of the Contracting Parties in accordance with its laws and regulations by investors of the other Contracting Party prior to as well as after the entry into force of this Agreement, but shall not apply to any dispute concerning an investment which arose or could have arisen, or any claim which was settled before its entry into force.

2. This Agreement shall not apply to matters, related to the acquisition, use, exploitation or disposition of land. These questions are regulated by the laws and regulations of either Contracting Party.

Article 13

Amendments and changes

The Contracting Parties may make amendments and changes to this Agreement by mutual consent. Such amendments and changes shall be made in written and, upon entry into force in the manner prescribed in paragraph 1 of Article 14, shall constitute an integral and inseparable part of this Agreement.

Article 14

Entry into Force, Duration, and Termination

1. This Agreement shall enter into force on the date of receipt through diplomatic channels of the last notification that the respective internal legal procedures of the Contracting Parties for its entry into force have been completed.

2. This Agreement shall remain in force for a period of ten (10) years. It shall continue to be in force for indefinite period thereafter until the expiration of twelve (12) months from the date on which either Contracting Party have given written notice of termination to the other.

3. With respect to investments made prior to the effective date of termination of this Agreement, the provisions of Articles 1 through 12 shall remain in force for a further period of ten (10) years from such date.

DONE in duplicate at Yerevan, on 25 April 2006, in Armenian, Lithuanian and English languages, all texts being equally authentic. In case of divergent interpretation of this Agreement, the English text shall prevail.

The Agreement has entered into force on 16 March 2007.